

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՌԼԵՆԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐՅԱՆ. ԱՐՁԱԿԱԳԻՐԸ, ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՎ ԳՐԱԴԱՏԸ

Ժ. 01. 01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ՍՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՊԱՐԳԵՎԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՐՐԻԵԼՅԱՆ ՎԱԶԳԵՆ ԱՐՇԱԼՈՒՅԱԻ

բանասիրական գիտությունների
թեկնածու

ԽԱՌԱՏՅԱՆ ԱԼԱ ԱՐԱՄԻ

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ. Արեդյանի անվան
գրականության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. դեկտեմբերի 19-ին՝ ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՂ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. նոյեմբերի 17 -ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԱԼ. Ա. ՍԱՎԱՐՅԱՆ

ԹԵՄԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ռուբեն Ջարդարյանը (1874-1915) շուրջ քառորդ դար՝ 1891-ից մինչև 1915 թ.՝ իր եղերական վախճանը, ամբողջ կարողություններն ու հմտությունները ներդրել է գրական-մշակութային, մանկավարժության և հրապարակագրության ասպարեզներում:

Ատենախոսի հիմնական ասելիքը սկսված է Ջարդարյանի գրական ժառանգության վրա, քանի որ նրա անունը բոլորին հայտնի է դարձել նախևառաջ իր ստեղծագործություններով: Այնուամենայնիվ, պատշաճ վերլուծության են արժանացել նաև այն հիմնարար սկզբունքները, որոնք անկյունաքարային են նրա բազմաճյուղ գործունեության մեջ՝ ա) ազգային ինքնագիտակցության արթնացում, բ) հայության համախմբում սեփական ուժերի շուրջը, գ) յուրաքանչյուր անհատի միջից ստրուկի, կամակատարի հոգեբանության թոթափում, դ) նոր ու ուժեղ հայի կերպարի ստեղծում, ե) խաղաղ կացութաձև և համամարդկային բարձր իդեալների ձգտում, զ) գեղեցիկի ինքնօրինակ ընկալում ու փառաբանություն:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ժամանակներում էլ ավելի այժմեական է դառնում Ջարդարյանի և մյուս եղեռնագարկ մտավորականների մասին նոր խոսք ասելը կամ նոր փաստերի վերհանումը, մանավանդ որ թուրքական իշխանությունները համառորեն ժխտում են իրենց նախորդների կողմից կազմակերպված հայոց ցեղասպանության իրողությունը: Հատկապես Ջարդարյանի պարագայում դա ավելի արդիական է դառնում, քանզի հրապարակի վրա չկան նրա կյանքն ու գրական գործունեությունը համակողմանիորեն ներկայացնող աշխատություններ:

Ուսումնասիրությունը գործնական մշանակություն կարող է ունենալ արդեն ձևավորվող զարդարյանագիտության հետագա զարգացման համար, ինչպես նաև կարող է օգտակար լինել ուսանողների, դասախոսների և հայ գրակառությանը զբաղվող շրջանակների համար:

ՈՒՍՈՒՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան արևմտահայ արձակագիր, հրապարակախոս, քննադատ, քաղաքական գործիչ, մանկավարժ Ռ. Ջարդարյանի կյանքն ու գործն է: Ատենախոսի նպատակն է ներկայացնել Ջարդարյանի կենսագրության հիմնական գծերը՝ նորահայտ փաստերի շրջանառմամբ, ինչպես նաև վերլուծության ենթարկել նրա բազմաժանր գրական ժառանգությունը՝ գրականագիտական արդիական մեթոդներով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՄԱԿԱՆ ՈՒ ՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատանքի տեսական ու մեթոդական հիմքը Ջարդարյանի գրական ու գրադատական գործերն են: Ատենախոսության մեջ այդ ստեղծագործությունները ներկայացվում են քննական և վերլուծական արդի մեթոդներով:

Ջարդարյանի ստեղծագործությունների քննության բնագավառում, չնայած առկա մեծաքանակ ու բազմաբնույթ հրապարակումներին, դիմանկարային

հողվածներին ու վերլուծական նյութերին, դեռևս անելիք շատ կա: Կարևոր է այդ ամենը ի մի ժողովել և համակարգել արդի գրականագիտության լուսյի ներքո. այդ առումով ընդամենը երկու փորձ է արված¹:

Ռ. Ջարդարյանի կենսագործունեությունը քննվում է այլ տեսանկյունով՝ «Արձակագիրը», «Բանաստեղծը» և «Գրադատը» թեմատիկ մասնավորեցում-ներով:

ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության հիմնախնդիրները արտացոլվել են Հայաստանի Հանրապետության գիտական հանդեսներում:

Ատենախոսությունը նախնական քննության է անցել Երևանի պետական համալսարանի հայ գրականության ամբիոնում և հանձնարարվել է պաշտպանության:

ԱՆԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է «Ներածություն»-ից, չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ներածության» էջերում ընդհանուր գծերով ներկայացվում են հարցի պատմությունը, նյութի ուսումնասիրվածության աստիճանը, հիմնավորվում է աշխատանքի թեման, բնորոշվում է նրա արդիականությունը, պարզաբանվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

Ռուբեն Ջարդարյանը դեռևս աշակերտական տարիներից հակվում է դեպի գրականությունը, կատարում է նախափորձեր: 1891-ին Հ. Փալազաշյանի «Ծաղիկ» լրագրում երևում է Ջարդարյանի առաջին տպագիր խոսքը՝ «Իմ բաղձանքը» վերնագրով: Խնդիր բարձրացնող առաջին հրապարակումը՝ «Քյուլխանեն ներս» վերտառությամբ, լույս է տեսնում 1894 թ. 4. Պոլսի «Հայրենիք» թերթում²: Այս հրապարակումը, փաստորեն, 20-ամյա Ջարդարյանի համար դառնում է լավ սկիզբ՝ հրապարակախոսության ասպարեզում կայանալու ճանապարհին:

Ջարդարյանը գրականություն է մուտք գործում 1893 թ., երբ Կ. Պոլսի «Մասիս» հանդեսում տպագրվում են նրա առաջին ստեղծագործությունները՝ «Երգչուհին», «Վրաններ Մաստառի շրջանը» արձակ էջերը: Նույն 1893 թ. հրա-

¹ Տե՛ս **Նելլի Կարապետյանի** «Ռուբեն Ջարդարյանի կյանքը և ստեղծագործությունը» թեկնածուականատենախոսությունը (Երևան, 2005), ինչպես նաև **Հայկազ Հակոբջանյանի** «Արևմտահայ գավառագիր արձակը. պատմություն և տեսություն» դոկտորականատենախոսության Ռուբեն Ջարդարյանին նվիրված գլուխը (Երևան, 1998 թ.):

² Տե՛ս «Հայրենիք», 4. Պոլիս, 1894, համ. 749:

պարակավ հնչում է առաջին արծազանքը: Ա. Չոպանյանը Կ. Պոլսի «Հայրենիք» թերթում, խոսելով Ռ. Որբերյանի «Հիշատակաց ծաղիկներ» բանաստեղծական ժողովածուի մասին, հպանցիկ անդրադարձել է նաև Ջարդարյանին³:

Գրողի անունը մտավորական շրջանակներում ավելի հայտնի է դառնում, երբ 1895 թ. Ա. Չոպանյանի «Ծաղիկ»-ում լույս են տեսնում նրա «Քարացածները», «Ծովակին հարսը» հեքիաթները: Այդ հաջող և խոստումնալից սկիզբը, դժբախտաբար, համընկնում է 1894-1896 թթ. համիդյան ջարդերին, որոնք մի որոշ ժամանակով խափանում են հայ գրողների և, ընդհանրապես, մտավորականների գործունեությունը: Փակվում են թերթեր ու հանդեսներ, որոշ գրողներ ու հասարակական գործիչներ լքում են հայ մշակութային կենտրոն Կ. Պոլիսը: Սարսափի ու մղձավանջի օրերը որոշ չափով թոթափվում են 1898 թ., երբ վերաբացվում են արգելված պարբերականները: Հենց այդ թվականից սկսած՝ Ջարդարյանն աշխատակցում է «Մասիս», «Ծաղիկ», «Արևելք», «Արևելյան մամուլ» և «Շիրակ» լրագրերին՝ հրապարակելով ժամանակի հասարակական-գրական կյանքը լուսաբանող հոդվածներ և ինքնատիպ երկեր: Հետզհետե հոգևոր արթնության առկայծումներ են նշմարվում տիրող խավարի ու երկյուղի մթնոլորտում: 1900-ականների սկզբին նոր շնչառություն ստացած գրական շարժումը բորբոքվում է «Վաղվան գրականությունը» բանավիճային շիկացումներով: Ջարդարյանը խարբերոյից ուղարկած իր թղթակցություններով քննարկման կիզակետում էր:

1898 թ. նա համալրում է ՀՅԴ շարքերը, **Ասլան** ծածկանունով թղթակցում «Դրոշակ» թերթին:

Համբավ ձեռք բերած գրական ու հասարակական գործիչը չէր կարող վրիպել թուրքական իշխանության տեսադաշտից: Եվ սկսվում են հետապնդումները: 1903-ին բանտարկվում է, ապա ազատ արձակվում: Շուտով տեղի են ունենում դեպքեր, որոնք նոր արգելքներ են ստեղծում Ջարդարյանի ճանապարհին: Ուստի, հարկադրաբար հրաժարվելով Մանիսայի վարժարանի տեսչի պաշտոնից, Ջարդարյանը վերադառնում է Ջմյուռնիա՝ պատրաստվելու ընկերների ծրագրած փախուստին: Նա հայտնվել էր, այսպես կոչված, անբարեհույսների ցուցակում, և օր առաջ նրա մեկնումը երկրից վերածվում էր ծայրահեղ անհրաժեշտության: 1905 թ. Ջարդարյանն ընտանիքով փախչում է Բուլղարիա, որտեղից արդեն հրավեր էր ստացել խմբագրելու «Ռազմիկ» թերթը: Աղբյուրների մի զգալի մասում թյուրիմացաբար նշվում է, թե Ջարդարյանն է հրատարակում կամ հիմնում «Ռազմիկ»-ը, ինչը անտամաբանական է, քանզի նա չուներ տպագրության համար անհրաժեշտ ֆինանսական կարողություններ:

Այսպիսով՝ 1905 թ., երբ Ջարդարյանը 15-ամյա գործունեությունից հետո որոշակի հաջողությունների էր հասել և բավականին մեծ համարում ուներ հասարակական գրեթե բոլոր շրջաններում, սկիզբ են առնում նոր որոնումների, կարոտի ու սպասումների տարիները: Բուլղարիայի Ֆիլիպե (այժմ՝ Պլովդիվ) քաղաքում նա «Ռազմիկ» թերթով ծավալում է հրապարակախոսական բուռն գործունեություն, երբեմն էլ տպագրում երկեր՝ **Էժտահար** կեղծանունով: Նա թղթակցության է հրավիրում հայ մտավորականությանը, այդ թվում նաև արտասահմանում գտնվող Սիամանթոյին, Ռ. Որբերյանին և Դ. Վարուժանին:

³ Տե՛ս «Հայրենիք», Կ. Պոլիս, 1893, համ. 568:

Հեռու հալածանքներից ու ճնշիչ գրաքննությունից՝ Ջարդարյանը ոչ միայն ճշգրտորեն ներկայացնում էր Արևելյան և Արևմտյան Հայաստանների կացությունը, այլև ազատ ու անկաշկանդ արտահայտում էր իր վերաբերմունքը, տեսակետները՝ այս կամ այն հարցի կապակցությամբ, ժողովրդին տողորում ազատաբաղձության ու հեղափոխականության տրամադրություններով:

1907 թ. նա Վիեննայում մասնակցում է ՀՀԴ 4-րդ Ընդհանուր ժողովին: Ջարդարյանը «Ռազմիկ»-ի խմբագրապետությունը վարում է մինչև 1908-ը՝ Օսմանյան Թուրքիայի նոր Սահմանադրության հռչակումը: Այդ, այսպես կոչված, հեղաշրջումը հույսի նշույլներ է արթնացնում տարագիր հայերի սրտերում: Ուզուկությունը համակում է նաև պանդուխտ մտավորականներին: Նրանցից շատերը, այդ թվում և Ջարդարյանը, վերադառնում են Կ. Պոլիս՝ կարծելով, թե երիտասարդ բարենորոգիչները կբերեն ազգերի իրավահավասարություն և ազատություն: Ի դեպ, Ջարդարյանն այն քչերից էր, որ մինչև վերջ չէր հավատում թուրք գործիչների անկեղծությանը: Այնուամենայնիվ, նա իր պարտքն է համարում հայրենիք վերադառնալ և խանդավառության օրերին լինել ժողովրդի հետ: Տարագիր մտավորականը օգոստոսի 1-ին կրկին Կ. Պոլսում էր:

Մի կարճ ժամանակ՝ 1908-ի նոյեմբերի 1-ից մինչև 1909-ի ապրիլի 2-ը, Ջարդարյանն աշխատակցում է Միսաք Գոչունյանի (Քասիմ) խմբագրությամբ լույս տեսնող «Ժամանակ» թերթին՝ գրելով 33 հոդված: Սրան զուգահեռ՝ 1908-ի դեկտեմբերի 16-ից «Խամակողմներ»-ից մեկն է դառնում նույն տեղի «Ազդակ» գրական, հասարակական, քաղաքական շաբաթաթերթի (խմբագրակազմը՝ Գ. Բարսեղյան, Ջ. Եսայան, Վահրամ Թաթուլ, Շ. Միսաքյան)՝ հանդես գալով մեկերկու շափեկան հոդվածներով: 1909 թ. հունիսի 10-ին լույս է տեսնում «Ազատամարտ» օրաթերթի առաջին համարը, և խմբագրի պաշտոնը ստանձնում է արդեն բազմափորձ Ռ. Ջարդարյանը: Նրա համար սկսվում է բազմաճյուղ, աշխատատար, հետաքրքիր, բուռն, բայց միևնույն ժամանակ հույզգերով ու տազնապներով լի գործունեության մի նոր շրջափուլ: 1909-1915 թթ. նա հիմնականում զբաղվում է հրապարակախոսական, մանկավարժական, թարգմանչական, հրատարակչական, կուսակցական աշխատանքներով: Վերադարձի առաջին տարիներին ընտրվում է Ազգային երեսփոխանական ժողովի ու Հայոց հրատարակչական ընկերության խմբագրական մարմնի անդամ:

«Ազատամարտը» կարճ ժամանակ անց դառնում է արևմտահայության ամենասպասված և ամենաընթերցվող լրագրերից մեկը: «Ազատամարտի» բարձր ժողովրդականությունը, կարծում ենք, առաջին հերթին պայմանավորված էր Ռ. Ջարդարյան մարդու և խմբագրի գործոնով: 1909 թ. մինչև 1915 թ. ապրիլը՝ Մեծ եղեռնի ողբերգական օրերը, «Ազատամարտն» արձագանքում էր Արևմտյան Հայաստանի ընկերային, տնտեսական ու քաղաքական, գրական-մշակութային կյանքին, վեր էր հանում հատկապես գավառների խնդիրները, փորձում ամեն գնով պաշտպանել արևմտահայերի ոտնահարվող իրավունքները: Թեև իր ստորագրությամբ Ջարդարյանը քիչ հոդվածներ է լույս ընծայել, սակայն գրել է համարձակ ու խարազանող անստորագիր խմբագրականներ: Այդ հոդվածներն աչքաթող չէին արվում երիտթուրքական իշխանավորների կողմից: 1909 թ. մի հրապարակման համար («Պարսկաստանի Փարլամենթը և Հայ պատգամավորներ»)՝⁴, իշխանությունները դատ են բաց անում «Ազատամարտի» դեմ: Ջարդար-

⁴ Տե՛ս «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1909, համ. 103:

յանը պատվով է դուրս գալիս և այս փորձությունից, շարունակում համառ ու սկզբունքային պայքարը ընդդեմ անեն տեսակ անարդարության, ոտնձգության, հանուն հանրային, առանձնապես հայության իրավունքների ու շահերի պաշտպանության: Ճնշումների ազդեցության ներքո 1912 թ. «Ազատամարտը» տպագրվում է ընդհատումներով՝ փոփոխվող անուններով՝ «Առաջամարտ», «Բյութահիա», «Ազդակ» և այլն:

1910 թ. հուլիսի 10-ին Ջարդարյանը հիմնում է «Ազատամարտ» գրական, զեղարվեստական և գիտական շաբաթաթերթ-հավելվածը: Ժամանակի հոգևոր մշակութային դաշտում «Ազատամարտը» ստանձնում է ուրույն դերակատարություն՝ գործելու լայն ասպարեզ տրամադրելով արևմտահայ տաղանդավոր մտածողներին: Այն լույս է տեսնում մինչև 73-րդ համարը (վերջին թիվը՝ 72, 1911թ., նոյեմբեր 28/11 ղեկտեմբեր)՝ Ռ. Ջարդարյանի, Ռ. Դարբինյանի և Շ. Միսաքյանի փոխնիփոխ խմբագրապետությամբ: 1911-ի ղեկտեմբերից որոշվում է պարբերականը լույս աշխարհ բերել «Բամբիռ» անունով, բայց ձեռնարկը մի քանի օրով հետաձգվում է, որից հետո նոր շաբաթաթերթը՝ «Բագին» գլխագրով, լույս է տեսնում կարճ ժամանակով՝ առանց Ջարդարյանի մասնակցության:

1910 թ. լույս է տեսնում գրողի երկերի ժողովածուն՝ «Ցայգալույս» (Արծակ էջեր) խորագրով: Իհարկե, չեն ուշանում արծագանքները: Ամենուր հնչում ու զրվում են կարծիքներ, զնահատականներ՝ մեծ մասամբ շնորհավորանքի ու քաջալերության: «Ցայգալույս»-ի հեղինակի գրական առանձնաշնորհը պատշաճ ուշադրության է արժանանում նաև արևելահայության մտավոր կենտրոն Թիֆլիսում:

Կարճ ժամանակում Ջարդարյանը վայելում է հասարակության սերն ու համակրանքը: Այն քչերից մեկն էր նա, ում հռչակը միանգամից դուրս էր գալիս ազգային գրականության շրջանակներից և լայն տարածում գտնում եվրոպական արվեստասերների մեջ: 1910-ի ղեկտեմբերի 8-ին Ա. Չոպանյանին ուղղված նամակում Ջարդարյանը մեծ բավականությամբ հայտնում է. «Գիտե՞ք արդյոք, որ պ. Մաքլեր բարյացակամությունն ունեցած է իմ ալ «Ցայգալույս»-են քսան կտոր իրատարակել իր հիմնած Bibiotheque-ին մեջ»⁵:

1913 թ. մայիսի 5-ին Կ. Պոլսում էսայան սանուց միության նախածեռնությամբ կազմակերպված գրական չորրորդ ասուլիսը նվիրված էր Ջարդարյանի «Ցայգալույս»-ի քննարկմանը: Արժեքավոր վերլուծություններով ու բնութագրումներով հանդես են գալիս Երուխանը, Ջ. Եսայանը, Յ. Սիրունին և Կոմիտաս վարդապետը: Կ. Պոլսի գրական ասուլիսներին եռանդով մասնակցում էր նաև Ջարդարյանը՝ ծանրակշիռ խոսքով և հետաքրքիր դիտարկումներով:

1910-ականների սկզբին՝ ներառյալ 1914 թ., Ջարդարյանը գրական նոր զարգացումների բովում էր. իր մասնակցությունն է բերում իրականության և իդեալի հակադրությանը նպատակամիտված, ուժի, գեղեցկության և այլ արժեքների պանծացմանը նվիրված «հեթանոսական» գրական շարժմանը՝ «Մեհյան» հանդեսում տպագրելով «Յայրենական սազը» (համար 3), «Նավասարդ» տարեգրքում՝ «Ով որ սուլթան մը ունի իր հոգիին մեջ» ստեղծագործությունները:

1914 թ., երբ Ջարդարյանը Կարինում մասնակցում էր ԶԳԻ 8-րդ Ընդհանուր ժողովին, սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Դաշնակցությունն անավարտ է թողնում ժողովը, և Ջարդարյանը տագնապով վերադառնում է

⁵ «Արևմտահայ գրողների նամակների», էջ 242:

Պոլիս: Երիտթուրքական կառավարությունը հարմար պահին օգտագործում է՝ իրագործելու վաղօրոք մշակված ծրագիրը՝ մեկընդմիջտ ազատվել հայերից ու Չայկական հարցից: 1915 թ. ապրիլին շատերի հետ ձերբակալվում է նաև Ջարդարյանը: Նրան ու բոլոր շատ թե քիչ աչքի ընկած մտավորականներին՝ ավելի քան 200 հոգու, 1915 թ. ապրիլի 10-ի լույս 11-ի գիշերը տանում են Պոլսի կենտրոնական բանտ: Այդ մասին առավել հանգամանորեն նկարագրում են եղեռնից մազապուրծ Արամ Անտոնյանն ու բժիշկ Նազգաշյանը: Ա. Անտոնյանը վկայում է, որ Ջարդարյանը Պոլսի կենտրոնական բանտ է բերվել թանջքով հիվանդ վիճակում և ամբողջ գիշեր չի կարողացել աչք փակել: Նազգաշյանը պատմում է ոչ միայն Պոլսի, այլև Այաշի բանտային կյանքի մասին, ուր տեղափոխել էին 71 հոգու՝ «...գրեթե բոլորը կուսակցականներն է հեղափոխականներն բաղկացած»⁶:

Այաշից Ջարդարյանը թուրքերենով քարտ-նամակ է ուղարկում իր կնոջը՝ թվագրված 1915-ի ապրիլի 28-ին⁷: Բժիշկ Նազգաշյանը վկայում է, որ Այաշի բանտից Ջարդարյանը քարտ-նամակով մի կերպ հասկացնում է, որ երկու օր Անկարայի բանտում պահելուց հետո իրենց տարել են Եսկի-Շեհիր: Ջարդարյանի Գողգոթայի ճանապարհը շարունակվում է նախ՝ Էնկյուրի (Անկարա), ապա՝ Չալեպ, այնուհետև սպանվում է Ուրֆայի մոտերը (Մեքսենե) 41 տարին դեռ չբոլորած: Պահպանվել է նաև Ջարդարյանի վերջին նամակը, որը հասցեագրել է դարձյալ կնոջը՝ այս անգամ արդեն հայերենով⁸: Ուշարժանն այն է, որ նշյալ գրությունը՝ ստորագրված 1915 թ. մայիսի 28-ին, Ջարդարյանի ընտանիքին է հասել երկար քաջբռնկներից հետո միայն՝ օգոստոսի 9-ին, երբ արդեն (հուլիսի 26-ին) ակնամվոր մտավորականը սպանված էր:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՉԱԿԱԳԻՐԸ

Բազմաժանր է Ջարդարյանի արձակը՝ նորավեպ, վիպակ, պատկեր, հեքիաթ, արձակ բանաստեղծություններ և այլն: Իհարկե, որոշ դեպքերում Ջարդարյանը չի պահպանում վերոնշյալ ժանրերին բնորոշ կաղապարները և ավելի ազատ է ստեղծագործում, սակայն ընդհանուր առմամբ չի խախտում ներժանրային կառույցների համամասնությունը: Նրա նորավեպերն ու վիպակները երբեմն տարբերվում են դասական նորավեպից ու վիպակից. գրեթե չի զգացվում սահմանը այդ երկու ժանրերի միջև: Նույնիսկ խնդիր է առաջանում Ջարդարյանի արձակ գործերը «նորավեպ», «վիպակ» կամ «պատմվածք» բնորոշելու հարցում:

Ջարդարյանի նորավեպ-պատմվածք-վիպակ միջժանրային «վեճի» պարագայում մեզ համար կողմնորոշիչը թերևս կարող է լինել հենց իր՝ գրողի՝ նորավեպին տված բնորոշումը. «**Նորավեպը** պարզապես խտացած վեպ մըն է, ուր ավելի սեղմ շրջանակի և անձուկ սահմանի մը մեջ վեր առնված է կյանքի մեկ կողմը կամ բարբերու մեկ նկարը, համառոտելով ամբողջություն մը մանրա-

⁶ «Նայիրի», Բեյրութ, 1965, համ. 48-50, էջ 12:

⁷ Տես **Գևորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1959, էջ 153:

⁸ Տես նույն տեղը, էջ 155:

նկարչական գծերով»⁹: Աշխատանքում հաճախակի գործածել ենք «նորավեպ» բառը (չբացառելով մյուս երկուսի կիրառությունը, քանզի, ինչպես նշում է էդ. Ջրբաշյանը, նովելը «պատմվածքի տարատեսակն է»)՝ որպես արևմտահայ գրականության մեջ տվյալ շրջափուլում ընդունված և տարածուն գտած ստեղծագործության անվանում:

Ջարդարյանի արձակ երկերի մի զգալի մասը նորավեպեր են, որոնցում գրողը հավատարիմ է մնում իր սահմանմանը: Պարզապես պետք է գատել երկու կարևորագույն հանգամանք: Առաջին՝ նորավեպին կամ նովելին հատուկ գործողության զարգացման լարվածությունը, սրընթացությունը, դեպքերի ու մարդկային ճակատագրերի անսպասելի վախճանը տիպաբանական և կառուցվածքային տեսանկյունից նրա երկերում դիտվում են համեմատաբար թույլ կողմեր: Երկրորդ՝ գրողի վիպական ստեղծագործությունների առանցքային մասը կազմում են ոչ թե գործողությունների հնարավոր կամ տրամաբանական զարգացումները, անսպասելի շրջադարձերը, այլ դրանց ուղղակի անդրադարձները հերոսների հոգեկան աշխարհի վրա:

Ջարդարյանը յուրովի շարունակում էր 19-րդ դարի վերջին հաստատված և 20-րդ դարասկզբին խոր արմատներ գցած այն գիծը, որն ընդունված է անվանել «չեխովյան» կամ մեծ աշխարհի փոքր մարդկանց ճակատագրերի պատկերում: Ինչ վերաբերում է Ջարդարյանի ստեղծագործական մեթոդին, ապա կարծում ենք, որ նրա արձակում առկա են մի քանի գրական ուղղությունների համադրություններ: Այս հարցում նկատելի տարածայնություններ ունեն թե՛ ժամանակի և թե՛ նորօրյա գրականագետներն ու քննադատները: Մի մասի կարծիքով՝ Ջարդարյանը իրապաշտ է, մյուս մասն էլ նրան համարում է ռոմանտիկ և խորհրդապաշտ: Մեր կարծիքով՝ Ջարդարյանը խորքով ռեալիստ է՝ ռոմանտիկին և սիմվոլիստին հատուկ մտածելակերպի ու ստեղծագործական լուծումների զուգորդումներով: Նրա արձակին հատուկ են բուն իրականության ճշմարտացի արտացոլման դրսևորումները, ինչպես նաև ռոմանտիզմի առանձնահատկություններից մեկը՝ լավատեսության ճառագող լույսը:

Ջարդարյանի ստեղծագործության թեմատիկայի վերաբերյալ խոսելիս ևս հնարավոր չէ առանձնացնել կոնկրետ մասնավորություններ. դրանք շատ են ու տարաբնույթ: Այդուհանդերձ, նրա արձակում ընդգծվում են արևմտահայ գավառի ու գավառացու ծանր ու թշվառ կացության, գյուղական հետամնացության, պանդխտության, ազատագրական պայքարի կոչի, հայ մարդու, առանձնապես հայ կնոջ հոգեբանական խնդիրները, հայրենասիրության, անձնական և ամանձնական սիրո, խոհափիլիսոփայական և իրականության այլ երևույթների արծարծումները:

Ջարդարյանի արձակը հնարավորինս ամբողջական ներկայացնելու համար նախընտրել ենք թեմատիկ-ժանրային բաժանում կատարել: Հավելենք նաև, որ առաջնայնությունը տվել ենք թեմային. ժանրի ընտրությունը ավելի շատ պայմանական բնույթ է կրում:

⁹ **Ջարդարյան Ռ.**, Մեղրագետ, ժողովածու արդի հայ և օտար գրականության, Կ. Պոլիս, 1911, էջ 490:

¹⁰ «Գրական ժանրեր. պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը», Երևան, 1973, էջ 51:

ա) Դրամատիկ հոգեվիճակների պատկերումը նորավեպերում և պատմվածքներում

Զարդարյանի՝ հոգեբան գրող լինելն առաջին անգամ ընդգծել է Ջ. Եսայանը «Ցայգալույս»-ին նվիրված գրական ասուլիսում. «...անիկա Խարբերդն էր, իր տառապանքին ներքև հզոր և նույնիսկ իր տառապանքով հզորացած, անիկա ոգին էր մեր ամենեն քաղցրորեն տխուր բանաստեղծությամբ մը օծուն հայ գավառին որուն վշտագին բայց ժպտուն, հալածական բայց երազատես զավակներուն ցավի և ուրախության վանկերը, աչքերու հրայրքը, հոգիներու սարսուռները կը փոխանցեր մեզի իր գեղեցիկ և հանկուցիչ արվեստին միջոցով»¹¹: Հակառակ կարծիքն է հայտնել Հ. Օշականը՝ գտնելով, որ Զարդարյանին չի հաջողվել հոգեբանական կերպարներ ստեղծել. «Զարդարյանի պատմվածքները տեսակ մը խառնուրդ են բարքերու, ծգտումներու, մտածումներու ու դեռ ուրիշ բաներու: Այս տարտղումմին մեջ **հոգեբանությունը**, այսինքն հոգեկան վիճակներ ստեղծելու, անոնց զարգացումին հսկելու, անոնց ուռելուն և հետո քայքայվելուն մեքենականությունը վարելու աշխատանքը ու շահագործումը կոտորակված ու պակասավոր տեղի կ'ունենան»¹²: Չընդունելով հիշյալ գնահատականը՝ մշեմք, որ Զարդարյանին նվիրված նրա ընդարձակ ուսումնասիրությունն առանձին դեպքերում անկողմնակալ է, և փորձենք առարկայորեն ցույց տալ Զարդարյանի կերպարաստեղծման հոգեբանական կողմերն ու եղանակները:

Հոգեկերտվածքը և դրամատիզմը Զարդարյանի նորավեպերի ներհատկություններից են: Գրողը պատկերել է տարբեր իրադրություններում հայտնված մարդկանց հոգեվիճակներ՝ իրենց ուրույն ներաշխարհի ողբերգականությամբ: «Եկեղեցիին առյուծը» ստեղծագործության մեջ քահանայի դրաման պայմանավորված է թուրքերի հարձակումներից հայերի անպաշտպանվածությամբ և դրանց դեմն առնելու անզորության գիտակցությամբ: Իննսունամյա Նորսոն հոգեկան ցնցումներ է ունենում հայրենաբաղձությունից և երկիր վերադառնալու անկարողությունից («Հայրենիքս կուզեմ ես»): Մարիամի անփառատ վիշտը կապված է համագյուղացի թուրքի կողմից իր աղջկա առևանգման և անօգնական լինելու հանգամանքի հետ («Շուն մըն ալ պակաս»): Շատ ավելի նուրբ հոգեվիճակներ են ներկայացված «Ան հավը կանչեց» վիպակում, ուր գրեթե բոլոր հերոսներն էլ տառապող հոգիներ են:

Զարդարյանի նորավեպերում մեծ մասամբ ներկայացված է քայքայվող ընտանիքների անդամների հոգեկան դրաման: Ուշագրավն այն է, որ յուրաքանչյուր նորավեպ՝ կյանքի արտապատկերման և կերպավորման ձևերով ու շեշտադրումներով, չի կրկնում մեկ այլ երկի: Ամեն մեկում Զարդարյանը տվել է իրականության մի կողմը և ստեղծել միանգամայն տարբեր հոգեբանության ու մտածողության տեր հերոսների:

Զարդարյանի նորավեպերում կերպավորված տառապող հոգիների գերակշռող մասը կանայք են, և դա պատահական չէ: Ժամանակի մամուլի ուսումնասիրությունից պարզվում է, որ հայ կնոջը, մասնավորապես գավառաբնակներին նվիրված մեծաքանակ հոդվածներ ու ստեղծագործություններ կան: Զարդարյանի դիտանկյունից՝ հայ կնոջ եղբրականությունն ավելի խոր արմատներ ունի:

¹¹ «Գրական ասուլիսներ», Դ, Կ. Պոլիս, 1913, էջ 10-11:

¹² **Օշական Հ.**, Համապատկեր արևմտահայ գրականության, հատոր 7, Անթիլիաս, 1979, էջ 310:

ժամանակին նա տեսություն է ցանկացել գրել այդ մասին, որն անավարտ է մնացել: Սակայն մի հրապարակման մեջ՝ «Խարբերոցի կնիկը» վերնագրով¹³, վերոնշյալ տեսության շրջանակում Ջարդարյանը բացահայտում է խնդրին աղերսվող ավանդական մի կարծրատիպ. «Հազիվ աղջիկ զավակը գլուխը գետնին վրա, աշխարհի իր առաջին լացը կուլա և դայակը՝ հոր ու բարեկամի աչքի լույսը կը բաշխես, ընտանիքի մեծերուն դեմքն ի վար դժգոհ տրամադրության մը հոգեկան արտահայտությունը կը կախվի՝ կ'ըսես ուրիշ լաց մըն ալ իրենց իրեսին՝ սխալ ապսպրանք մ'ընդունող մարդու անբավարարությամբ»¹⁴:

Ընդհանրապես, Ջարդարյանի նորավեպերին հատուկ չեն երկխոսություններն ու սուր կոնֆլիկտները, որոնցում ավելի վառ են դրսևորվում հերոսների հոգեվիճակներն ու մտահուզանքները: Ջարդարյանի հերոսները լուռ են, ինքնամփոփ. նրանք իրենց ներսում կրուն են մեծ տառապանքներ և ոչ ոքի հաղորդակից չեն դարձնում իրենց վշտերին: Ջարդարյանն այդ եղանակով կարծեք թե ընթերցողին տեսանելի է դարձնում իր կերպարների հոգու ցավերը առավել խորությամբ: Այսինքն՝ կարելի է որոշակիորեն ասել, թե գրողի կերտած հերոսները լռությամբ, իրենք իրենց ցավի մեջ ու ցավի հետ ասում են առավելագույնը մարդկային տառապանքների մասին:

Իբրև ամփոփում՝ կարող ենք ասել, որ Ջարդարյանի նորավեպերում առկա բազմաթիվ դրամատիկ հոգեվիճակները փաստարկված են և արտացոլված հոգեբան գրողի վարպետությամբ:

բ) Ազատաբաղձությունը և ուժի փիլիսոփայությունը արձակ բանաստեղծություններում ու լեզենդներում

«Անհող գեղգեղանքներ», «Կարոտներ», «Գարնանամուտի դաշտանկար», «Ռաշտային վերջալույս», «Սև երագ», «Աշնան հովվերգություն» արձակ քերթվածներում Ջարդարյանը շքեղ բնապատկերների նուրբ համադրությամբ ներկայացնում է անօգնական, անապահով մարդկանց, կիսակործան, լքված շեներն ու տները, կամ նկարագրում է անհոգ, երագային մի աշխարհ՝ շաղախված մարդու բարեբեր աշխատանքով և բնության գեղեցիկ երևույթներով: Բայց նմանաբնույթ ստեղծագործություններով հնարավոր չէր մեղմել միացող երկրի ցավը, փարատել հայրենակիցների անպարագիծ վշտերը. անհրաժեշտ էին ոգի բարձրացնող, մարտականորեն տրամադրող գործեր: Ջարդարյանը պայքարի երգեր բաց տեքստով չէր կարող գրել ինչպես համիդյան բռնապետության, այնպես էլ երիտթուրքական կեղծ ժողովրդավարության տարիներին: Տրամաբանական է նաև, որ այդպիսի ստեղծագործություններ նա կարող էր լույս ընծայել կամ կեղծանվամբ, կամ էլ՝ դիմելով այլաբանության և կերտելով խորհրդանշական պատկերներ:

Ջարդարյանը բարձրաձայնում է իր համոզմունքները, հուժկու և ազդեցիկ խոսքերով կայծեր բորբոքում մարդկանց հոգիներում: Ընդհանրապես, գրողը հիանալի է ըմբռնել հայ ժողովրդի կորուստների ու ողբերգությունների պատճառները. վերջինիս միշտ խանգարել է տարերայնորեն գործելը և ուժի գաղափարի բացակայությունը: Գրողը, սակայն, հմտորեն մխրձվել է փաստերի հոր-

¹³ Տե՛ս «Ծաղիկ» շաբաթաթերթ, Կ.Պոլիս, 1903, համ. 36:

¹⁴ Նույն տեղում:

ծանուտը և այնտեղից վեր հանել պատճառների պատճառը. ազգը բաղկացած է անհատներից, ուստի՝ բոլորն անխտիր պետք է ազատության գաղափարի նվիրյալներ լինեն՝ պատրաստ գիտակցված մահվան, որպեսզի պայքարի վերջնադրյունը հաղթական լինի:

Խորապես գիտակցելով ազգային հավաքականության ու միասնականության ուժը՝ Ջարդարյանն անկարելի է համարել մի քանի անհատների անձնագր-հուլյան գնով հաջողության հասնելը: Մի շարք արձակ քերթվածներում և լեզբենդներում կարմիր թելի նման գծագրվում են Ջարդարյանի ուղենշային գաղափարները: Ազատության գինը համագոր է հայրենասեր զավակների թափած արյանն ու ասպետական նահատակությունը: Ջարդարյանի համար այդ դրույթն անբեկանելի է, և չկա հետդարձի կամ նահանջի ճանապարհ:

«Կայծերը» արձակ բանաստեղծության մեջ, որն ակնհայտորեն գրվել է րաֆֆիական ներշնչումով, Ջարդարյանի հերոսը գաղափարները կայծերի տեսքով տարածողն է, ով վստահաբար գտնում է, որ արդարության ու ճշմարտության ճանապարհը հենց դրանով է պայմանավորված: Ջարդարյանը բավականին հստակ նկատել է մեր ազգի ազատասիրական ձգտումները խոչընդոտող և մեկ հույժ կարևոր երևույթ. դա հային ներհատուկ դյուրահավատությունն է և օտարների հետ հույսեր կապելը: Լավատեղյակ լինելով մեր պատմությանն ու նրա բախտորոշ անցքերին՝ Ջարդարյանի պես մտավորականը վաղուց էր միֆ համարում եվրոպական խոշոր տերությունների միջոցով հայկական հարցի լուծումը: Զբացահայտվելու զգուշավորությամբ պայմանավորված՝ գրողը այդ միֆի պսակազերծումն իրականացնում էր բնապատկերների, կենդանիների և բնության ծայների շնչավորում-անձնավորմամբ: «Գամփռը», «Մենավոր ծառը», «Լեռան եղնիկից» արձակ բանաստեղծություններն ունեն ընդգծված սիմվոլ-խորհրդանշաններ: Թե՛ գամփռը, թե՛ ծառը, թե՛ եղնիկը կերպավորում են ազատատենչ Հայաստանը, հայ ազգին: Երեքն էլ վեր են կանգնած այն գորշ իրականությունից, ուր ճնշվում են միտքն ու հոգին, ուր թագավորում են վեհերոտությունը, նենգությունը, թուլակամությունը, փոքրոգությունը:

«Գամփռը» երկի շուրջ ձևավորված հիացական կարծիքները մի կողմ թողնելով՝ ուզում ենք դիտարկել խիստ բացասական, ավելի ստույգ՝ ջախջախիչ մի մեկնություն, որը մեծ աղմուկ է հանել ժամանակին և նորովի քննության կարիք ունի: Խոսքը վերաբերում է Շահան Շահնուրի «Ավուր հացի կարոտ» հրապարակմանը: Սփյուռքահայ գրողը նախ պսակազերծում է հայ գրականությունը՝ գտնելով, թե այն զուրկ է մտքից ու տրամաբանությունից: Որպես իր արտահայտածի ապացույց՝ նա վկայակոչում է Ջարդարյանի «Գամփռը»: Քննադատության թիրախ դարձնելով գրողի «Ցայգալույս» ժողովածուն ընդհանրապես՝ Շահնուրը Ջարդարյանի, այսպես կոչված, «միջակությունը» ի ցույց դնելու համար մատնանշում է «Գամփռի»՝ իր կարծիքով խոցելի կետերը: Ժխտողական վերաբերմունքը նախևառաջ առնչվում է շան կերպավորման ձևին: Ըստ Շահնուրի մեկնակետի՝ գամփռի կերպարում մարմնավորված է դաշնակցական անհատը, որին հալածում են ստրկամիտ, գաղափարագուրկ քոթոթները: Շահնուրը Ջարդարյանին մեղադրում է մի շարք հարցերում: Նրա կարծիքով՝ արձակագիրը սկզբից մինչև վերջ գամփռին վերագրում է մարդկային հատկանիշներ, ինչը արվեստում անթույլատրելի է: Դատապարտելի է համարում թեման բացեփբաց չներկայացնելը: Իսկ ամենանշավակելին, Շահնուրի դիտարկմամբ, Ջարդարյանի երկում մտքի և տրամաբանության աղճատվածությունն է, տկարությունը, ան-

հստակությունը. «Ան իր գամփռին կը պատվիրե կրկին լեռ բարձրանալ «և անհավասար կռիվի մը մեջ երիտասարդ գայլի մը հետ ճակատ ճակատի գալ և մեռնիլ վիրակից»։ Ուրեմն, ըստ Ջարդարյանի, Դաշնակը ոչինչ ունի «անելիք» ի նպաստ կյանքին։ Անկարող է կյանքը գեղեցկացնելու, բարեկամելու, փրկելու։ Ան պետք է որ «անհավասար կռիվ» փնտռե։ Փոխանակ հաղթանակի, պետք է վիրակից և գեղեցկատիպ մահը դրոնե։ Մեռի՛ր կ'ըսե իր հզո՛ր մտավորականին, անսահման անգիտակցությամբ»¹⁵։

Նախ արձանագրենք, որ Շահնուրի վերլուծության հիմնակետը՝ գամփռին իբրև գյուղից քաղաք եկած դաշնակցականի ներկայացնելը, անընդունելի է։ Եթե Ջարդարյանը դաշնակցական գործիչ էր, սա անպայմանորեն չի ենթադրում, որ պետք է հերոսը այդ կուսակցության ներկայացուցիչ լինի։ Մյուս կողմից՝ նա երբեք, ոչ մի առիթով, ոչ մի ստեղծագործության մեջ դաշնակցականի չի կերպավորել, քանի որ նրա գիտակցական մակարդակը թույլ չէր տա գեղարվեստը մղել կուսակցականացման, բացի այդ՝ ազատագրության գաղափարը դաշնակցականների մենաշնորհը չէ։ Եթե խնդրին մոտենանք շահնուրյան դիտանկյունից, թե գամփռը ազատախոհ դաշնակցական մտավորականն է, այդ դեպքում մի շարք հարցեր են առաջանում. ովքե՞ր են քոթոթները, ո՞վ է այդ մեծ շան գավակը, գայլի կերպարով հանդես եկող թշնամու դեմ արդյոք միայն դաշնակցակա՞նն է պայքարում։ Այս հարցերի պատասխանները պետք է ձևակերպեր Շահնուրը, որպեսզի համոզիչ դարձներ իր պնդումը, ինչը չի արել։ Ինչ վերաբերում է վերջինիս նշած գաղափարապաշտ անհատի, գերմարդու ստեղծման գարդարյանական անհաջող ճիգերին, նկատենք, թե այդ կարծիքը մերժելի չէ։

Իհարկե, Ջարդարյանը չէր սահմանափակվում սոսկ ազգային գաղափարների քողարկված կամ բացահայտ վերհանմամբ և դրանց արտացոլմամբ. նրա հայեցակետի համաձայն՝ ազգերի ու երկրների խաղաղ գոյակցության համար անհրաժեշտ է վեհանձնություն և խղճմտանք։ Այդ նպատակին գրողը ծառայեցրել է երկու ստեղծագործություն՝ «Բռնավորին արցունքը» և «Տեմիր-Ղայա»։ Ջարդարյանի որոշ արձակ բանաստեղծությունների համար տարընթերցումների անհրաժեշտություն է առաջանում։ Օրինակ՝ «Գամփռը», «Լեռան եղնիկին» և «Մենավոր ծառը» ստեղծագործությունների հիմնական մոտիվը հայի ու Հայաստանի՝ ազատ կյանքի ձգտումների, փնտրտուքների համակարգն է, սակայն չենք բացառում այլ թեմաների արծարծումը ևս պատկերների մեջ։ Բավականաչափ ծանոթ լինելով Ջարդարյանի կենսագործունեությանն ու աշխարհընկալմանը՝ մենք մերժելի չենք համարում այն թեզը, համաձայն որի՝ գամփռը, եղնիկը, ծառը դիտվում են որպես միջակությունը, քաղբենությունն ու հարմարվողականությունը չհանդուրժող բարձր անհատականություններ։

գ) Հեքիաթները

Ռ. Ջարդարյանի հեքիաթները՝ ժողովրդական տարերքի ընդգրկումներով, իմաստասիրական խորքով նրա ստեղծագործության գարդն են։ Հաջողված հղացքներ լինելուց բացի՝ հեքիաթները կարևորվում են այն բանով, որ գրողի կայացումը գրողական աշխարհում պայմանավորված էր հենց դրանց լույսընծայումով։ Տեղին է նշել, որ Ջարդարյանի եղերական վախճանից առաջ և հետո

¹⁵ «Ապագա», Փարիզ, 1936, 18-19 ասյրիլ։

հնչած գրեթե բոլոր գրախոսականներում բարձր են գնահատվում հատկապես նրա հեքիաթները: «Քայց իր տաղանդը իր բարձրագույն արժեքին կը հասնի իր բանաստեղծության և մանավանդ իր հեքիաթներուն մեջ որով անկիկ մեզ կը ներկայանա իբր ամենեն անխարդախ և ինքնուրույն **խորհրդանշական** բանաստեղծը»¹⁶.- նկատում է, օրինակ, Ջ. Եսայանը՝ «Ցայգալույս»-ին նվիրված գրական ասուլիսում:

Նախ փաստենք, որ Ջարդարյանի մի շարք հեքիաթների հենքը տարբեր ժողովուրդների մեջ տարածված ավանդազրույցներն են: Մյուս կողմից էլ՝ նա հղացել է նոր հեքիաթներ՝ ինքնուրույնաբար ընտրելով թե՛ ատաղձը, թե՛ ձկնը: Այս առթիվ, ի դեպ, բավականին խոր վերլուծություն է կատարել Գ. Օշականը. «**Սկզբնական հեքիաթները** գրված բոլորն ալ առաջին շրջանին: Այսինքն՝ երբ դեռ զորավոր ազդեցությանը տակն է իր շրջապատին և իր երիտասարդության: ...Ասոնց նկարագիրները – տեղական գույն, ճիշտ գծագրություն, փորձառական իմաստ, նկարող տարրի ազնվություն, ոճի շուք, պատկերի հաճախ նորություն, միշտ հարագատություն, ցեղային կնիք, ինքնաբուխ խորհուրդ, անմիջական տպավորում, արվեստ և մշակում»¹⁷: «Ջարդարյան իր գրական հեքիաթներում մեջ,- շարունակում է Օշականը,- կաշխատի սեպհական կառուցումով ու կը ստիպվի անոնց իբր բնակիչ սեպհական, այսինքն հնարովի իմաստություն մը հայթայթել»¹⁸: Քննադատը բացասական երանգավորմամբ մեկնաբանել է, ինչպես տեսնում ենք, իր կողմից բնորոշված «գրական» հեքիաթները՝ նկատի առնելով դրանց և՛ կառուցվածքը, և՛ բովանդակությունը: Առաջին մասով Օշականը միանգամայն իրավացի է, քանի որ Ջարդարյանի երկերն ավելի շուտ լեզուն ու արձակ բանաստեղծություն են հիշեցնում, քան հեքիաթ: Իսկ ինչ վերաբերում է Ջարդարյանի՝ ծեծված թեմաներով փիլիսոփայությամբ զբաղվելուն, ապա այստեղ Օշականը չափազանցել է: Հավերժական նյութերի զեղարվեստականացման հարցում ոչ մի արվեստագետ վերջնահանգրվանի չի հասել. միշտ էլ ա-սելիք կա: Ինչպես ասել է Դովի. Թունամյանը՝ «Հնորիքը... պատմելու մեջն է»¹⁹:

Նախքան հեքիաթների թեմատիկային ու մեկնությանը անցնելը կարևոր ենք Ջարդարյանի հեքիաթագիտության մակարդակը: «**Հեքիաթն** ալ կկազմե վիպագրության մաս, ըլլալով հրաշագան վեպ մը, որուն հաջողությունը կկայանա իր ճշմարտաման հանգամանքին մեջ, արտահայտելով երբեմն, այդ ձևով, քմայքն ու երևակայությունը, փիլիսոփայությունն ու հոգին ժողովրդի մը կամ պատմական շրջանի մը»²⁰,- Լակոնիկ մի բնորոշում, որով, սակայն, Ջարդարյանը որոշակիացնում ու հստակեցնում է իր հեքիաթների բովանդակությունը:

«Քարացածները», «Ծովակին հարսը», «Ջարնված որսորդը» հեքիաթները զեղարվեստական ինքնատիպ իրացումներ են մարդկային վեմագույն արժեքների և նրանց գոյության փաստը չհանդուրժող չար ուժերի մասին: Առաջինում նորահարսի շքեղությունից ցնցված բնության չար ուժերի պոռթկումն է, որն ավարտվում է հարսնևորների քարացմամբ: Երկրորդում ծովի փրփուրներից ծնված տղայի և մի կնոջ սիրավեպի տխուր վախճանն է՝ նախանձող չար ուժի՝

¹⁶ «Գրական ասուլիսներ», Դ, 4. Պոլիս, 1913, էջ 12:

¹⁷ **Օշական Գ.**, Համապատկեր արևմտահայ գրականության, հատոր 7, էջ 256:

¹⁸ Նույն տեղում, էջ 270:

¹⁹ **Թունամյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 6, Երևան, 1994, էջ 161:

²⁰ **Ջարդարյան Ռ.** Ցայգալույս, Երևան, 1959, էջ 500:

պառավ կնոջ միջամտությամբ: Երրորդում կուսական բնության ամենաչքնաղ էակներից մեկի՝ այծյամի՝ որսորդի գնդակից ոչնչացման պատմությունն է: Երեք ստեղծագործություններն էլ, ինչպես հիշատակել ենք, գրվել են ավանդազրույց-ների հիման վրա:

Հատկանշականն այն է, որ «Ծովակլին հարսը» հեքիաթի նյութը լայն տարածում ունի նաև այլ ժողովուրդների մեջ: Սակայն Ջարդարյանի «Ծովակլին հարսը» հիմնված է Վանում տարածված մի ավանդազրույցի վրա, որի մշակմամբ Հովհ. Թումանյանը ստեղծել է «Ախթամար» բալլադը:

Ջարդարյանը մտահոգացել է նաև այս հեքիաթի երկրորդ տարբերակը, որը Ա. Չոպանյանը տպագրել է «Անահիտ» հանդեսում: Ասել, որ մեծ տարբերություններ կան երկու տարբերակների միջև, ճիշտ չէ: Դժվար է պնդել նաև, թե Ջարդարյանը չի հավանել հեքիաթի առաջին տարբերակը և նորն է գրել: Ձուգադիոր քննելիս թեև էական փոփոխությունների չենք հանդիպում, սակայն նկատվում է գրողի՝ երկը կատարելության հասցնելու ձգտումը: «Ծովակլին հարսը» երկը՝ առաջին և երկրորդ տարբերակներով, Ջարդարյանի լավագույն հեքիաթն է:

«Ծովակլին հարսը», «Ամսեր խրճիթը» մյուս հեքիաթներից և ավանդավեպերից առանձնանում են այն բանով, որ դրանցում բացակայում են Ջարդարյանի մեկնաբանություն-բացատրությունները, ամեն ինչ ինքնաբերաբար է, գրողը միայն պատմում է և հետևում պատումի վախճանին: Մեր առջև գեղապաշտ Ջարդարյանն է, ով ոչնչով չի հիշեցնում ավանդապահ Ջարդարյանին, ում հանդիպում ենք «Սև հավը կանչեց», «Տերտերին հարսը», «Վա՛ խ, ես մեռնեի», «Սարերու տղան» պատմվածքներում, «Գանգը» հեքիաթում, «Բարոյականը գավառներու մեջ» հողվածում և այլ գրվածքներում:

Առաջին հայացքից, թվում է՝ ամեն ինչ ընկալելի է՝ ելնելով թեկուզ գրական այդ երկու ժանրերի՝ պատմվածքի և հեքիաթի բովանդակային տարբերություններից: Առաջինի պարագայում ամենառեալիստ գրողն իսկ կարող է դեպքերն ու դեմքերը սեփական դիտարանից ներկայացնել, այսինքն՝ որոշակիորեն միջամտել գործողություններին՝ հղացած նյութին, ըստ իր քմաց և տրամաբանության, ձև ու երանգ տալ:

Հեքիաթի դեպքում գրողն ազատ է միայն պատկերներ ստեղծելու և ասելիքի ձևի մեջ: Նա չի կարող շրջանառու ավանդազրույցն ու ավանդությունը այլափոխել, խեղաթյուրել բովանդակությունը, առավել ևս՝ մեկնություն տալ: Բայց Ջարդարյանի գրական աշխարհում մենք մի հետաքրքիր փաստ ենք արձանագրել՝ փոքրիկ զուգահեռ անցկացնելով «Ծովակլին հարսը» հեքիաթի և «Գանգը» ավանդավեպի միջև: Բովանդակային առումով որոշ նմանություն կա, սակայն առաջին հայացքից էլ ակնբախ է, որ առաջինում խոսք անգամ չկա կնոջ անհավատարմության մասին, մինչդեռ երկրորդում կինը ամուսնական դավաճանության համար, որպես պատիժ, պարանոցին կրում է սիրեկանի գանգը: Բայց մենք սրա վրա չէ, որ ուզում ենք կանգ առնել. համեմայն դեպս, Ջարդարյանը վիպել է համաձայն ավանդազրույցների: Բանն այն է, որ «Գանգը» ստեղծագործության մեջ Ջարդարյանը վերջում կարծիք է հայտնում, որով ընդգծում է իր ավանդապաշտությունը. «Եթե քաղաքները իրենց օրենքն ու իմաստությունը ունին, լեռն ալ ունի այս ամենը, իր բարոյական խիստ ըմբռնումը, իր դատողությունն ու քնարերգությունը, իր իմաստասիրությունը վերջապես՝ թեև քիչ մը անգութ բայց

միշտ արդար»²¹: Ջարդարյանի մտածողության և ստեղծագործության մեջ սկզբունքային և ուղեմշակային են լեռնականների բարոյական օրենքները:

Դառնանք «Քարացածները» երկին, որը Ջարդարյանի առաջին հեքիաթն է և սկզբնապես վերնագիր չի ունեցել²²: «Ցայգալույս»-ը հրատարակելիս միայն Ջարդարյանը վերնագրել է հեքիաթը՝ վերտառությունը փոխ առնելով Շաքարի՝ նույն ավանդության «Քարացածները» ստեղծագործությունից²³: Ժողովրդական այս ինքնատիպ ավանդությանը հարիր է մեր մատնանշած գաղափարը. բնության չար ուժերը, նախանձելով նորահարսի գեղեցկությանը, քարացնում են նրան էլ, հարսնևորներին էլ: Սակայն նույն ավանդապատումին շատ հարմար է նաև հարսի անհնազանդությունը և պատիժը, որը բնության անխախտ օրենքներից է: Հարսն այստեղ ոսոնահարում է այն կարգը, ըստ որի՝ իրավունք չունի մինչև հարսանիքի ավարտը ջողը համելու: Եթե դիտարկում ենք այս մեկնակետով, դարձյալ չենք հակասում անեծքի տրամաբանությանը և ավանդագրույցին ընդհանրապես: Ակամայից վերհիշում ենք Հովի. Թումանյանի «Անիծած հարսը» բալլադը, ուր ման կարծրատիպի խախտման համար հարսը անհիծվում է սկեսրոջ կողմից և հոպոպ թռչնի վերածվում:

Ջարդարյանի հեքիաթների մեջ ուրույն տեղ ունեն «Բզեզ մորքուրը», «Եղնիկ աղբարը» և «Երեք խրատ» ստեղծագործությունները: «Եղնիկ աղբարը» հեքիաթի սյուժեն տարածված է տարբեր ժողովուրդների մեջ, թեման՝ որբերի բախտը (ավելի մեղ իմաստով՝ խորթ մորից հալածվածների ճակատագիրը) համամարդկային է: Հայոց մեջ ավանդությունը հանդիպում է հիմնականում «Գառնիկ ախպերը» տարբերակով, որից էլ, անկասկած, օգտվել է Ջարդարյանը: Ռուսական տարբերակները ի մի են բերված «Сестрица Алёнушка и братец Иванушка» խորագրի ներքո, Գերմանիայում հայտնի է Գրիմ Եղբայրների «Հենզելն ու Գրետելը» հեքիաթը:

Ամփոփելով Ջարդարյանի առաջին շրջանի հեքիաթները կամ հեքիաթի վերածած ավանդագրույցները՝ ընդգծում ենք, որ գրողն ունի ստեղծագործական յուրահատուկ լաբորատորիա, գեղարվեստականացման նուրբ տեխնիկա ու ոճ:

«Երեք խրատ» հեքիաթում Ջարդարյանը պահպանել է դասական հեքիաթին բնորոշ գրեթե բոլոր հատկանիշները: Ինչպես սովորաբար ընդունված է հեքիաթներում, ամեն ինչ բարեհաջող է ավարտվում, սակայն շատ հստակ ընդգծվում է գաղափարը՝ հետևել խելացի և փորձառու մարդկանց խորհուրդներին, իմաստուն խրատներին, որպեսզի արկածախնդիրները չօգտվեն անծանոթ մարդկանց միամտությունից և նրանց գլխին մահվան սպառնալիք չստեղծեն:

Ինչպես մտավոր աշխարհի ներկայացուցիչներից շատերին, այնպես էլ Ջարդարյանին հուզել է ամենակարևոր և առեղծվածային հարցը՝ կյանքի ու մահվան խորհուրդը: Ի՞նչ է սերը, ի՞նչ է գեղեցկությունը, ի՞նչ է ուժը, ի՞նչ են կյանքն ու մահը, և, ի վերջո, ո՞րն է կյանքի իմաստը. ահա հարցեր, որոնց պատասխանները Ջարդարյանը յուրովի բանաձևել է «Մարդը չէր մեռներ», «Յոթը երգիչները» հեքիաթներում և «Հայրենական սազը» արձակ քերթվածում:

²¹ **Ջարդարյան Ռ.**, Ցայգալույս, Անթիլիաս, 1977, էջ 321:

²² Տե՛ս «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895, համ. 4, էջ 159-160:

²³ Տե՛ս «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895, համ. 10, էջ 351:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՂ ԲԱՆԱՍԵՂԾ

Լայն և ընդգրկուն է Ռուբեն Ջարդարյանի հետաքրքրությունների շրջանակը: Նա իր մտավոր կարողությունները չի սահմանափակել միայն գրական որևէ ասպարեզում: Առավելագույն չափով հայ գրականության առաջընթացին ու հարստացմանը նպաստելու ձգտումով էլ Ջարդարյանը ջանացել է նոր հորիզոններ բացել նաև քնարերգության մեջ: Այնուամենայնիվ, մեկ կարևորագույն փաստ ապացուցում է, որ Ջարդարյանը վստահության պակաս է զգացել պոեզիայի ասպարեզում և իր տաղանդի ուժը սոսկ արձակում է անբռնազբոս արտահայտությամբ պատկերացրել. 1910 թ.՝ «Ցայգալույս»-ը հրատարակելիս, ժողովածուն ընդգրկում է միայն «Աստվածները» քերթվածը, թեպետ արդեն գրվել էին մեզ ծանոթ բոլոր բանաստեղծությունները:

Ջարդարյանի քերթվածները պետք է քննել հիմնականում ժամանակագրական կարգով, քանզի դրանցում ցայտուն ընդգծվում են հեղինակի աշխարհայացքային, սկզբունքային դիրքորոշումները, դրանց աստիճանական զարգացումները:

Ինչպես բնորոշ է բոլոր սկսնակ, հատկապես պատանեկությունից վաղ երիտասարդության շենը ոտք դնող բանաստեղծներին, սովորաբար, արժարժվող թեման սիրայինն է: Ջարդարյանն այդ շարքում բացառություն չէ, թեև նրա քերթվածներում համամարդկային այդ մոտիվը մի փոքր այլ տրամադրությամբ և զգացումներով է դրսևորվում: «Հիշատակներես» բանաստեղծության մեջ 18-ամյա Ջարդարյանը հասուն մարդու խորհուրդներ է տալիս իր մտերիմ ընկերոջը՝ Որբերյանին՝ միաժամանակ արտահայտելով իրեն համակած դառնություններն ու հիասթափությունը.

Թողի ծուխ, հուր և ցավեր,
Սրտի հույզեր, տվայտում,
Եվ փարեցա կիսավեր
Կյանքին սիրով անհատնում²⁴:

«Վշտահար բարդին», «Կասկած» բանաստեղծությունները սիրուց տառապող և սիրած եակից քնքուշ վերաբերմունք ակնկալող հերոսի սրտի խոսքն են:

Սիրո հոգեբանության շերտերի հաջող նկարագրությամբ, մի շարք գեղեցիկ պատկերներով ու համեմատություններով հանդերձ՝ մոտիվը չդարձավ առանցքայինը, այլ ընդհակառակը, Ջարդարյանը շուտով սուր քննադատության ենթարկեց պոեզիայի սիրային ճյուղը՝ տուրք տալով ժամանակի առաջադրած խնդիրներին: Թերևս բացառություն է կազմում «Հրաժեշտը», որը գրվել է նրա սկզբունքային դիրքորոշումը հաստատող «Մեր բանաստեղծությունը» հրապարակագրությունից հետո: Թեմայի մերժման գաղափարն արտահայտված է նաև «Դեպի սեր» վերնագրով քերթվածում, որտեղ Ջարդարյանը մարդկանց կոչ է անում տեղ տալ, իր կարծիքով, այն սիրուն, որ տանում է դեպի նոր կյանք, նոր արշալույսներ, ազդարարում վերածնունդ.

Ավելի շո՛ւտ, արտորանքո՛վ, խուճապով
Թող հեռանան, թող մեռնին

²⁴ Որբերյան Ռ., Հիշատակաց ծաղիկներ, Կ. Պոլիս, 1893, էջ 77, 78:

Տարփանքները ախտավարակ մեր հոգուն՝
Իբրև պայեր հալածական թիլխամայով վրիուկին.
Եվ անոնց տեղ ապահով
Հարություն սիրո վարդալից, վերածընունդ փողփողուն,
Նոր ծաղիկներ բազմաբուրյան
Բանան իրենց բյուր աչքերը մանկական
Նոր արևի, արևներու սուրբ լույսին²⁵:

Նոր սերը Ջարդարյանին մեկընդմիշտ կապեց հայրենիքին, նրա խորհրդավոր և գեղահարաշ բնապատկերներին, դարձավ նրա ստեղծագործական ներշնչանքի ամենամաքուր, զորեղ կռվանը: «Պահապան դիցուհին» բանաստեղծության մեջ Ջարդարյանն անկեղծ հիացմունքով խոսում է լեռների, բնության գեղեցկությունների մասին: Լեռները՝ խորոխտ ու հմայիչ, իրեն դրդում են երգեր հյուսելու:

Հայրենիքի քաղաքական բախտը և գալիքի տխուր հեռապատկերը միահյուսվում են Ջարդարյանի մտքի քուրայում և վերածվում մի-մի բանաստեղծության: Արյունոտ, մահազույժ իրականությանը բանաստեղծն ուզում է հակադրել իր տեսլականը («Հոգիիս համար»): Պոետական հոգին ուզում է լցվել հայրենի բնաշխարհի հոգեթով ձայներով՝ խոսի ճոճունով, լճակի այլբախմամբ, սյուքի հեքով, որոնք խաղաղ օրերի պայծառ երգերն են («Երգ մը»)²⁶:

Հուսալքությունն ու անկեմդան պատկերները պիտի տեղի տային ըմբոստության ու պայքարի երգերին: «Բարձունքի փառաբանություն» կիսավարտ պոեմը և «Աստվածները» բանաստեղծությունը հենց այդ գաղափարների արտահայտություններ են: Վերջինի մեջ Ջարդարյանը բոլոր վեհերոտ հոգիներին մղում է այցելելու Բելլու լեռան գագաթին գտնվող քսանչորս աստվածների տաճարը, ուր կարող են ձեռք բերել խիզախություն ու տոկունություն: Դրան կնպաստի նաև փոքրիկ խաչնարածի հոգեպարար, աստվածային մեղեդին:

Ջարդարյանի քնարերգության մեջ նոր խորհուրդ ենք տեսնում, երբ նրա պոետական խառնվածքը, քաղաքական հայացքներն ու քաղաքացիական կողմնորոշումները լրացվում են մանկավարժ-դաստիարակի ստեղծագործական թռիչքներով: Ըստ Մեզիրեի (Խարբերդ) Կեդրոնական երկսեռ վարժարանի երաժշտության ուսուցիչ Ն.Ս.Ս. Թաշճյանի վկայության՝ Ջարդարյանը 1901-ի առաջին երկսեռ ուսումնավարտների համար գրել է բանաստեղծություններ, որոնք երգի են վերածվել²⁷: Նույն Թաշճյանի մեկ այլ վկայության համաձայն՝ Ջարդարյանը 1902-ի տարեվերջյան հանդեսի առթիվ ընթացավարտ աղջիկների մասնակցությամբ ներկայացրել է կազմակերպել, որը եզրափակվել է երգի վերածված նրա մի ոտանավորով:

Եթե ի մի խմբենք Ջարդարյանի չափածո գործերը, կարող ենք մշել, որ առավել հաջողված են «Վշտահար բարդին», «Պահապան դիցուհին», «Ծաղիկներու հոգին», «Հրաժեշտ», «Աստվածները» քերթվածները և «Բարձունքի փառաբանություն» պոեմը: Ջարդարյանի բանաստեղծական աշխարհը, թեկուզև ոճական ու պատկերաստեղծման տեսանկյունից ինքնատիպ, այնքան էլ տպավորիչ չէ, թերևս այն պատճառով, որ դրանց մի մասում ավելի քան ընդգծվում է գաղա-

²⁵ **Ջարդարյան Ռ.**, Ցայգալույս, Անթիլիաս, 1977, էջ 380:

²⁶ Նուն տեղում, էջ 370:

²⁷ «Հայրենիք», Բոստոն, 1930, համ. 9, էջ 115:

փարական շեշտադրությունը: Ամենամեծ քննադատը հենց ինքն է՝ Ջարդարյանը, ով, ամենայն հավանականությամբ, այդ նկատառումով էլ իր մտքերի շարահրանքը պատկերացրել է միայն մեծ կտավի վրա, իր ոճի համար սահմանափակ ու անհարիր համարել պոեզիան:

Ջարդարյանի բանաստեղծությունները չունեցան Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Ռ. Սևակի երկերի հմայքն ու ներգործությունը, սակայն ասելիքի ու պատկերների նորությամբ դրանք գրողին ուսումնասիրելու, համակողմանիորեն ճանաչելու, ներկայացնելու նոր ուղիներ են բացում:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ

ԳՐԱԴԱՏԸ. ԶԱՐԴԱՐՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՏՔՆԵՐԸ

Ջարդարյանի քննադատական առաջին խոսքն առնչվում է «պոլսահայ-գավառական գրականություն» հայտնի բանավեճին, երբ 1894-1896 թթ. համիդյան կոտորածներից հետո գրեթե ամայացած գրական անդաստանում ծագում է արևմտահայ գրականության ապագայի հարցը: Բանավեճի սկիզբը դրվում է 1900-ին, երբ արևմտահայ ճանաչված բանաստեղծ, գրադատ Արտ. Հարությունյանը «Մասիս» լրագրում տպագրած հարցարան-ծրագրով իր գրչակիցներին առաջարկում է մտքերի փոխանակությամբ ճշտել հայ գրականության ընթացքն ու գտնել ինքնուրույն, տոհմային բանարվեստ տանող ճանապարհը: Այս հարցարանին արձագանքում են շատ գրագետներ, գրադատներ: Նրանց մի մասը՝ Շ. Շավարշը (Միքիաս Արապյան), Ա. Ալպոյաճյանը և ուրիշներ, հանդես են գալիս պոլսահայ գրականության առաջնահերթության դիրքերից՝ գտնելով, որ արևմտահայ գրականության առաջընթացը և զարգացումը ապահովում են պոլսեցի գրագետները, ովքեր եվրոպական մշակույթի բարեբար ազդեցությամբ զգալի նրբաճաշակություն են հաղորդում իրենց երկերին:

Գրագետների ավելի ստվար մասը (Ռ. Ջարդարյան, Հովհ. Գազանճյան, Ռ. Որբերյան և այլք) պնդում էր, որ արևմտահայ գրականության զարգացումը առավելապես կախված է գավառական գրականությունից, քանի որ առանց բուն Արևմտահայաստանի, այսինքն՝ գավառների ցավը, հոգսերը, ժողովրդի ավանդությունները, ասույթները գրական նյութ դարձնելու հնարավոր չէ ինքնուրույն, տոհմային գրականություն ստեղծել: Նրանք իրավացիորեն շեշտում էին, որ Պոլիսը Արևմտյան Հայաստան չէ, և Պոլսում ստեղծված գրականությունը լիովին չի արտացոլում արևմտահայերի վիճակը, որ այն զուրկ է ցեղային կնիքից և ոգուց: «**Գավառական անունով** հասնցված Գրականությունը որքան ալ թարմատար ու ողորմելի հանգամանքով դիտված ըլլա շատ մը ավանդամու ու **ազնվական** գրագետներու կողմէ՝ որոնք իրենց թերափի թառին վրայեն չուզեն ամենեն արհամարհոտ ակնարկն ալ ձգել այդ **ռամիկին** վրա, երևույթներու վախճանական ու տրամաբանական հայեցողությունը ունեցողները սակայն անխախտ համոզում ունին թե գավառական գրականությունը ինքն է իսկ մեր թրքահայ գրականության վաղվան բարեշրջությունը»²⁸, - գրում է Ռ. Ջարդարյանը «Վաղվան գրականությունը» հոդվածում:

Զնայած զնահատականներուն երբեմն թույլ տրված ծայրահեղ արտահայտություններին՝ Ջարդարյանը լավ էր հասկացել Արտ. Հարությունյանի հարցա-

²⁸ «Մասիս», Կ. Պոլիս, 1900, համ. 40, էջ 631:

րանի էությունը: Նա խնդրին մոտենում էր այն գիտակցությամբ, որ հայ գրականությունը, չունենալով իր հիմքում ցեղի բարքերը, կյանքը, փորձառությունն ու իմաստնությունը, ինչքան էլ որ կրի օտար գեղարվեստների ազդեցությունը, չի կարող անկեղծ, ճշմարտացի, իսկատիպ համամարդկային արժեքներ ստեղծել:

Բանավեճը թեժանում է, երբ Ջարդարյանի հողվածից հետո հարթակում երևում է ժամանակի ականավոր մտավորականներից մեկը՝ Ռեթեսու Պերպերյանը: Նա, համակողմանիորեն քննելով առկա խնդիրները և, կանգ առնելով մի շարք կետերի վրա, ընդունում է, որ հանգամանաց բերումով արևմտահայության կրթամշակութային կենտրոն դարձած Կ. Պոլսում հայ գրագետը պիտի ստեղծեր իր կյանքին ու իրականությանը համահունչ գրական երկեր՝ օտար գեղարվեստի ազդեցության ներքո, սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե Կ. Պոլսի գրականությունը «օտարածն ու օտարահոտ» է, ինչպես կարծում են զավառի գրիչները: Պերպերյանը գտնում էր նաև, որ սխալ է այն տեսակետը, թե առանց տոհմային դիմագծի՝ գրականությունը չի կարող մարդկային բնույթ ունենալ, ընդհակառակը, նրա համոզմամբ, խորապես մարդկայինը իր մեջ ներառում է տոհմայինը, ազգայինը: Ունենալով այնպիսի տաղանդաշատ գրողներ, ինչպիսիք էին Թլկատինցին, Ռ. Ջարդարյանն ու Մշո Գեղամը, ովքեր, ըստ Պերպերյանի, «ավանդությանց նթերքեն հուճ նյութեր քաղելով՝ անոնցմե արվեստին ճարտարություններով զարդարված գեղեցկագիտական գործեր դուրս կը բերեն», զավառը դարձյալ չի կարող հավակնել տոհմային գրականության միակ հարազատ ներկայացուցչի դերին:

«Գրական խնդիրը. մեր պահանջը ի՞նչ է» հողվածում, ընդդիմանալով Պերպերյանի շատ տեսակետների, Ջարդարյանը նոր հարթության վրա է տեղափոխում բանավեճը: Եթե բարքերի նկարագրության խնդիրներում վերջինս անդրդվելի է ու նշանառության տակ է առնում վիպագիր Տյուսաբի՝ կնոջ ազատության թեման՝ համարելով ոչ բնական և արհեստական, լեզվական իրողությունների առնչությամբ, այնուամենայնիվ, մի փոքր վերապահում է անում. «Եթե լեզու մը կոկվի, կ'ազնվանա ու մատենագրական գործի մը կը դառնա՝ կը նշանակե թե այդ լեզուն կանխավ **խոսուն ու գործածական** լեզու մը ըլլալու է անպատճառ իր պատկանած հասարակության... Պոլսական գրողներու արժանիքն այն եղավ որ այդ լեզուն իր աղճատված, աղավաղ վիճակեն հանելով՝ հատկապես անոր բառերուն ուղիղ՝ այսինքն գրաբառի մեջ գործածված ձևերովը շրջաբերության դիրն...»²⁹:

Լայն իմաստով Ռ. Պերպերյանի մոտեցումը, ինչպես իրավացիորեն նկատել ու բնորոշել է գրականագետ Լ. Մնացականյանը, ամենահավասարակշռվածն է ու ամենաընդունելիին³⁰: Սակայն պիտի կանգ առնել, մեր կարծիքով, հարցարանի էական կողմերի վրա, բացել նրա ենթաշերտերը, մասնավորապես՝ առաջին ենթահարցը մանրագնին ուսումնասիրության, մեկնության կարիք ունի: Արտ. Հարությունյանը հազիվ թե պատահական կերպով այդպիսի հարցում աներ՝ «մեր ցեղն ընդունա՞կ է արդյոք ճշմարտապես հայ գրականություն ստեղծելու, թե՞ ոչ»: Ուշադրություն դարձնենք այն փաստին, որ գրադատը շեշտում է՝ հայ, ոչ թե ընդհանրապես գրականություն, որովհետև իսկական բանարվեստը

²⁹ «Մասիս», Կ. Պոլիս, 1901, համ. 16, էջ 251:

³⁰ Տե՛ս **Մնացականյան Լ.**, Քսաներորդ դարասկզբի արևմտահայ քննադատությունը, Երևան, 1990, էջ 27:

ազգություն չի ճանաչում: Ազգային նկարագրով օժտված գրականությունը ունակ է մշտապես ուժի, կամքի և հայրենասիրության ոգին արթուն պահելու տվյալ ազգի մեջ: Ահա սա էր հարցի բուն էությունը, որը մեր դիտանկյունից ավելի խորը էր ընկալել Ռ. Ջարդարյանը: Միանգամայն տեղին է նշել ակադ. Յր. Թամարազյանի դիպուկ համեմատությունը, ով վերը նշված «Վաղվան գրականության» խնդիրները առնչակցում է Վահան Տերյանի «Չայ գրականության գալիք օրը» ուսումնասիրության մեջ արծարծված մտահոգություններին³¹:

20-րդ դարասկզբին, չնայած բռնապետական ժանր պայմաններին, մշակութային կյանքում տեղի էին ունենում իրադարձություններ, հրատարակվում էին գրքեր, հրապարակվում էին տեսական-գրականագիտական ուսումնասիրություններ, որոնք ամբողջացնում էին գրական գործընթացները: Ջարդարյանի «Մեր բանաստեղծությունը» հոդվածը այդպիսի հրապարակումներից մեկն է, որի մեջ նա անդրադառնում է ժամանակի արևմտահայ պոեզիային: Նրա գնահատմամբ՝ արևմտահայ քնարերգությունն առանձնանում է անձնական զգացումների դրսևորումներով. «Աղջկան, լոկ կնկան նվիրված փառաբանություններու շարականներ, հառաչանքով, ողբով, զանգատով ու աղերսանքով պլեյոծված սիրային տրտմատալիդ մեղեդիներ՝ որոնց հավիտենական միօրինակությունը, որոնց խմբական արվեստականությունը կրկնվելով կրկնվելով անդադար՝ սպաններ են մեր մեջ մյուս բոլոր սերերը»³²: Ջարդարյանի կարծիքով՝ պետք է հայ գրականության սահմաններից դուրս վրձնել սերը, քանզի ժամանակը բարենպաստ չէ՝ զովերգելու ներանձնական ապրումներ: Նա քննադատում է բանաստեղծներին նաև այն բանի համար, որ նրանք ժողովրդական երգեր չեն մշակում, պոեզիայի համար նյութ չեն քաղում այդ հարազատ ծաղկատանից, անգամ թույլ ու միօրինակ են բնության տաղերը:

Իհարկե, չի կարելի համակարծիք լինել զարդարյանական բոլոր տեսակետներին: Նախ՝ ծայրահեղ գնահատություն է ընդհանրապես ժամանակի արևմտահայ բանաստեղծության, ի մասնավորի՝ սիրային քնարերգության այդաստիճան նսեմացումը: Մյուս կողմից՝ խիստ է Ջարդարյանի տված բնորոշումը սիրո մասին: Ճիշտ է, քննադատը ժխտողական այդ դիրքորոշումը հիմնավորում է՝ մեկնակետ ընդունելով ժամանակաշրջանի թելադրած մտայնությունը, սակայն իրավացի չէ Ջարդարյանը, որովհետև սերը զերծ է տարածաժամանակային կադապարումներից: Ջարդարյանին կարելի է համաձայնել այն կետերում, ուր, ըստ նրա, զգացմունքն արտահայտվում է բռնազբոսիկ ու անկենդան ձևերով, եղանակներով:

Վերոբերյալ հոդվածից հետո՝ նույն 1902 թ., նա հանդես է գալիս Սիպիլի (Ջապել Ասատուր) «Ցուլքեր» բանաստեղծական ժողովածուի գրախոսությամբ: Չանակողմանիորեն քննելով գիրքը՝ Ջարդարյանը զովեստի խոսքեր է հնչեցնում՝ այն համարելով ձեռքբերում արևմտահայ պոեզիայի ասպարեզում: 1906 թ. «Ռազմիկ»-ում տպագրվում է Ջարդարյանի գրախոսականը՝ Առանձարի (Միսաք Գույումճյան) «Վշտի ծիծաղ» գրքի մասին: Ջարդարյանն արժևորում է ընդգծում է ժողովածուի գեղարվեստական առանձնահատկությունները: Նա հակիրճ, բայց դիպուկ բնորոշում է Առանձարի գրելաոճը, վիպելու արվեստը և, ամենակարևորը, հստակ մեկնում է գրքի խորագիրը՝ ելակետ ունենալով վերջի-

³¹ Թամարազյան Յր., Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Երևան, 1986, էջ 212:

³² «Արևելյան մամուլ», Ջնյունհիա, 1902, համ. 12, էջ 521:

նիս «Վշտի ծիծաղ» պատմվածքը: Ծիծաղ՝ վշտի միջից. սա է վերոհիշյալ երկի առանցքային գաղափարը, որը ուղենշային է Առանձարի ժողովածուն ընդգրկող յուրաքանչյուր հղացքի համար:

1911 թ. 4. Պոլսում լույս է տեսնում Ավ. Իսահակյանի «Աբու Լալա-Մահարի» պոեմը: Այն առաջինը գրախոսում է Ջարդարյանը՝ մի տաք ու համարձակ հողվածի լույսընծայմամբ: «Երգ մը չէ անիկա, այլ ասիվոր անաթեմա մը՝ ուղղված ընկերության դեմ, ընկերական կարգերուն և օրենքներուն դեմ, մարդկության դեմ ու աշխարհի դեմ...»³³: Ջարդարյանը գրականագետի նուրբ դիտողականությամբ թափանցել է պոեմի խորքը, ընկալել քնարական հերոսի որոնումներն ու պայքարը, բարձր է գնահատել Իսահակյանին՝ որպես մարդկային մտքի և զգացմունքների թարգմանի և այդ ամենը չափածո կուռ կառուցվածքում պարագրոհի: Ջարդարյանը ամբողջ խորքով ըմբռնում և մեկնաբանում է արաբ բանաստեղծի նգովքը, աշխարհամերժությունը:

Ջարդարյանի գրաքննադատական մտքի բարձրակետը 4. Պոլսի գրական ասուլիսներում նրա ելույթներն են՝ Վարուժանի «Յեթանոս երգեր» ժողովածուի և Սիամանթոյի «Ամբողջական գործի» առնչությամբ: Դժբախտաբար, երկու դեպքում էլ մեզ հասածը Ջարդարյանի ելույթների ամփոփ պատկերն է, ոչ ամբողջականը, բայց պահպանվածն էլ, վստահ ենք, հատուկ ուշադրության է արժանի և գրապատմական կարևորագույն արժեք է:

1913 թ. կազմակերպված գրական ասուլիսներից երրորդում, երբ քննարկվում էր «Յեթանոս երգեր»-ը, Ջարդարյանը խորամուխ է լինում ժողովածուի լեզվի և իրապաշտության հարցերում: Անդրադարձ կատարելով նախորդ հռետորի՝ Գ. Բարսեղյանի ճառին՝ Ջարդարյանը հանդես է գալիս Վարուժանի գրքի լեզվական արտահայտչաձևերի պաշտպանության դիրքերից՝ գտնելով, թե վերջինիս քերթվածների լեզուն չպետք է լինի պարզ, այլ պետք է համապատասխանի ասելիքի խորությանը:

Սիամանթոյի «Ամբողջական գործին» նվիրված գրական ասուլիսի փակման խոսքը պատկանում է Ջարդարյանին՝ որպես միջոցառումը նախագահողի: Նա, ամփոփելով օրվա բանախոսների ելույթները, տպավորիչ եզրահանգումներ է կատարում: «Սիամանթոն վերլուծելով երեք էական գիծեր կը գտնեք անոր մեջ... Սեմպոլիզմը, Միսթիցիզմը և Լավատեսությունը: Լավատեսությունը արդեն Յայուն նկարագրին գլխավոր գիծը կը կազմե: Յայ արվեստը ծայրեծայր կարծես լավատեսությունով է թրծված: Յայ լավագույն գրագետները լավատեսներ են եղած: Նույնիսկ հայ երաժշտության մեջն էն ծայրեծայր լավատեսություն մը կ'արտահոսի: Սիամանթո ռազմի երգիչն է: Բայց մինչ իր նախորդները կռիվի կը դրդեին և ժողովուրդը պայքարի կիրավիրեին, Սիամանթո ընդհակառակը կռիվը կ'երգե: Ան կ'երգե տանջանքը և զայն հույսի կը փոխե»³⁴: Նշենք, որ այս գնահատումից տարիներ առաջ՝ 1907 թ., գրադատ Ջարդարյանն արդեն դիպուկ բնութագրումներով արժևորել էր Սիամանթոյի պոեզիան՝ «Յոգեվարքի և հույսի ջահեր» գրքի հրատարակման առիթով:

Անդրադառնանք նաև «Մեղրագետում» զետեղված մի շարք դիմանկարների, որոնք, ինքնատիպ բնութագրականներ լինելով, արժանի են լուսաբանման: Կանգ առնենք, օրինակ, Ձոհրապի գեղարվեստի զարդարյանական բնութա-

³³ «Ազատամարտ», շաբաթաթերթ-հավելված, 4. Պոլիս, 1911, համ. 32, էջ 512:

³⁴ «Գրական ասուլիսներ», 2, 4. Պոլիս, 1913, էջ 38:

գրման վրա. «Թրքահայ գրականության մեջ առաջին վարպետը իրապաշտ գրականության և իշխանը նորավեպի արվեստին: Կտրուկ և հզոր ոճ մը՝ ու արվեստի տեսակետով կատարելություն, իսկ հրապարակախոսության մեջ պողպատյա զենք մըն է, մեկ երկու բառով ամբողջ պատկեր մը վրձնելու ճարտարություն, դիտելու և վերլուծելու մեծ տաղանդ՝ ահա նկարագիրը Գ. Ջորդարյայի գրականության»³⁵: Ջարդարյանը բարձր արժանիքներ է տեսել Ռաֆֆու արվեստում՝ նրան համարելով «հայ վիպագրության հայրը և ամենամեծ վարպետը»:

Ջարդարյանի պես լայնախոհ մտավորականը չէր կարող պարփակվել սոսկ հայ գրականության սահմաններում: Ֆրանսերենի իմացությունը նրան լայն հնարավորություն էր ընձեռում՝ անմիջականորեն շփվելու եվրոպական բարձրարժեք մշակույթին, գրելու հոդվածներ, կատարելու ուսումնասիրություններ և թարգմանություններ: Նրա հետաքրքրությունների շրջանակում էին հատկապես ռուսական, լեհական, չեխական, դանիական, շվեդական, նորվեգական մշակույթները:

ԵՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որպես «Յայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության ակաճավոր ներկայացուցիչ և հրապարակախոս-խմբագիր՝ Ռուբեն Ջարդարյանն առաջնորդվել է ոչ այնքան կուսակցական, որքան ազգային ազնիվ մտավորականի կենցաղով ու վարքագծով:

2. Իբրև մանկավարժ՝ Ջարդարյանը բեկումնային քայլ է կատարել՝ մարդասիրական, մշակութային երկխոսության և իմացաբանական նպատակներով «Մեղրագետ»-ի պրակներում համաշխարհային գրականության ցանկում զետեղելով անգամ թուրք գրողների երկերը:

3. Գեղարվեստական որակի իմաստով Ջարդարյանի ստեղծագործության մեջ ամենից բարձրը արձակն է. հայ գրականության մեջ նա հաստատուն տեղ է նվաճել նոր որակի հեքիաթներով ու արձակ բանաստեղծություններով: Նորավեպերը նույնպես նոր խոսք էին՝ անհատականության դրոշմով կնքված:

4. Ջարդարյանը հոգեբան գրող է, և դրամատիզմը, ներքին կոնֆլիկտը նրա կերպարաստեղծման հիմնական գծերն են: Ընդգծված հոգեբանական տիպարներ են գրողի պատումների ու նովելների կին հերոսները (Նունիկ, Սարիամ, Սառա):

5. Ջարդարյանի արձակում ծանրակշիռ տեղ ունեն քաղաքական թեմաներով գրված երկերը, և դրանցում՝ հատկապես արձակ բանաստեղծություններում և լեզնդներում, հաճախ ենթիմաստային և անձնավորման եղանակներով մատնանշված են հայ ժողովրդի, ի մասնավորի՝ արևմտահայերի ազատագրության գաղափարներն ու դրանց իրագործման ուղիները («Եկեղեցիին առյուծը», «Նահանջը», «Գամփռը», «Լեռան եղնիկին», «Ով որ Սուլթան մը ունի իր հոգիին մեջ»):

6. Գրողը, չսահմանափակվելով միայն ազգային խնդիրներով, արծարծել է նաև մարդու ազատության հիմնախնդիրը՝ յուրովի բացահայտելով մարդկության խելճության, թշվառության պատճառները:

7. Ջարդարյանը զգալի ավանդ ունի հայ հեքիաթագրության պատմության մեջ: Տաղանդավոր էջեր են ինչպես ավանդություն-ավանդագրույցների նրա

³⁵ **Ջարդարյան Ռ.**, Մեղրագետ, Կ. Պոլիս, 1911, էջ 23:

մշակումները, այնպես էլ կյանքի ու մահվան փոխհերթագայությանը նվիրված հեքիաթները («Ճովակին հարսը», «Բզեզ մորքուրը», «Մարդը չէր մեռներ», «Յոթը երգիչները»):

8. Արվեստի տեսանկյունից արձակին զիջում են Ջարդարյանի չափածո ստեղծագործությունները: Պոեզիային բնորոշ ընթերցող-քննարակյալ հերոս կապը զգալիորեն թույլ է դրանցում (թերևս բացառություն են կազմում «Բարձունքի փառաբանություն» անավարտ պոեմը և մեկ-երկու բանաստեղծություն):

9. Ջարդարյանը տաղանդավոր թարգմանիչ է. Մ. Գորկու «Մայրը», «Ընկեր», Է. Վերիառնի «Ապստամբությունը», Է. Պոյի «Ագռավը», Վ. Յյուգոյի «Խղճմտանքը», Ա. դը Լամարթինի «Ուր է արդարությունը», Լ. Յոյի «Երկու բնակարաններ», շվեդ գրագիտուհի Ս. Լագերլյոֆի «Երուսաղեմը Տալեքարլիի մեջ» և այլ երկեր տպավորիչ, արվեստի ուժով կատարված փոխադրումներ են:

10. Ջարդարյանը լրջագույն նպաստ ունի հայ քննադատական մտքի պատմության մեջ: Նա, չնայած որոշ կտրուկ, երբեմն էլ սուբյեկտիվիզմի տարրեր պարունակող գնահատություններին, իբրև քննադատ՝ հիմնականում պահպանել է ամաչառություն («Վաղվան գրականությունը», «Մեր բանաստեղծությունը», «Աբու Լալա-Մահարի») և ճիշտ է բնորոշել ժամանակի գրական գործընթացը նաև զարգացման հեռանկարի իմաստով: Ահա ինչու նրա շատ դիտարկումներ ու բնորոշումներ ունեն արդիական հնչողություն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Ազատաբաղձությունը և ուժի փիլիսոփայությունը Ռ. Ջարդարյանի արձակ բանաստեղծություններում ու լեզենդներում, «Գրականագիտական հանդես», 2008-2009, Ա-Բ (Թ-Ժ), էջ 263-270:

2. Դրամատիկ հոգեվիճակների պատկերումը Ռուբեն Ջարդարյանի նորավեպերում, «Կանթեղ», 2011, թիվ 1 (46), էջ 16-22:

3. Ռուբեն Ջարդարյանի գրական-քննադատական հայացքները, «Հայագիտական հանդես», 2011, թիվ 2-3 (16-17), էջ 76-86:

САРИБЕКЯН АНДРАНИК КАРЛЕНОВИЧ

«РУБЕН ЗАРДАРЯН - ПРОЗАИК, ПОЭТ И ЛИТЕРАТУРНЫЙ КРИТИК»

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности Ж.01.01 «Армянская классическая литература»

Защита состоится 19 декабря 2012г. в 14:30 на заседании специализированного совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу г.Ереван, ул.Хачатура Абовяна 52/А, ЕГУ, корпус филологического факультета, аудитория 202.

РЕЗЮМЕ

Рубен Зардарян - западноармянский поэт, критик, публицист, политический деятель, переводчик и педагог, несмотря на то, что играл большую роль в культурной жизни на рубеже IX-XX веков, был мало известен. Он являлся одной из жертв геноцида армян 1915-го года.

С 1891 года по 1915 год, порядка двадцати пяти лет, Зардарян посвятил проблемам армянства, отдавая все свои силы, возможности и способности развитию педагогической и литературно-художественной мысли.

Как выдающийся представитель политической партии «Армянская Революционная Федерация Дашнакцутюн» Рубен Зардарян руководствовался и действовал согласно своим убеждениям, был прежде всего честным национальным интеллектуалом. Об этом свидетельствует тот факт, что в разные времена, редактируя газеты «Размик», «Азатамарт» вышеназванной партии, он продолжал сохранять теплые дружеские отношения со своими коллегами, писателями и общественными деятелями, несмотря на их политические взгляды и принадлежность к той или иной партии. Будучи редактором, Зардарян создавал для более или менее талантливых людей необходимые условия, дружески их поддерживал, давал полезные советы начинающим ораторам и деятелям литературы, способствуя их самовыражению.

Деятельность Рубена Зардаряна, как публичного человека, была плодотворной, так как количество его публикаций по политическим проблемам в вестниках «Размик», «Азатамарт», «Жаманак» и в других социально-экономических изданиях настолько велико, что они могли бы стать отдельной темой для научного исследования. В этих публикациях, в особенности в редакционных /многие из которых так и не были подписаны из-за мер предосторожности/, он осуждал регрессивные и отрицательные явления своего времени, смело критикуя преследования, насилие и несправедливость со стороны турецкого правительства. Они отличаются правдивым описанием восприятия реальных проблем, четкой формулировкой вопросов и комментариев, эмоциональным и всесторонним анализом. Как

педагог Зардарян в томах составленного им учебника «Мехрагет» сделал большой шаг вперед в контексте межкультурного диалога и взаимопонимания, по гуманным соображениям включив в него произведения турецких поэтов.

Рубен Зардарян талантливый переводчик таких произведений, как: «Мать» и «Друг» Максима Горького, «Восстание» Эмиля Верхарна, «Ворон» Эдгара По, «Совесть» Виктора Гюго, «Где справедливость?» Альфонса де Ламартина и другие. Эти переводы отличаются впечатляющей силой истинного искусства.

В прозаических стихах и легендах писатель выражает в основном освободительные идеи армянского народа /в частности западных армян/, отмечая пути их реализации, он часто обращается к помощи аллегорических образов и символики («Лев Церкви», «Отступление», «Волкодав»). Писатель, однако, не ограничиваясь только национальными проблемами, развивает еще и проблематику свободы человека, своеобразно объясняя причины человеческой забитости и нищеты. Согласно философии Рубена Зардаряна, нет настоящей свободы без сильной и свобододолюбивой личности, народа.

Зардарян имеет большой вклад в историю написания сказок. Он мастерски обработал легенды, сказания, создав еще и новые сказки. В 1895 году, благодаря художественно оригинальным страницам произведений «Невеста моря» и «Окаменевшие», Рубен Зардарян стал известен миру литературы.

Как многих искусствоведов, так и Зардаряна интересовал вопрос *жизни и смерти*. Эта общечеловеческая проблематика отражается в художественных сказках писателя: «Человек не умер бы...» и «Семь певцов». Сказочник – вот главное достоинство творчества Зардаряна.

Несмотря на своеобразную систему образов и специфику стиля стихотворений Зардаряна, они сравнительно слабы с точки зрения художественной ценности и рифмовки. Стихи его значительно отстают от произведений великих поэтов его поколения: Сиаманто, Даниела Варужана, Рубена Севака. Тем не менее они являются частью художественного наследия Зардаряна, в них он выразил освободительные настроения, восторженные чувства по угнетенной родине, личные переживания, а также другие настроения.

Рубен Зардарян имеет большой вклад в историю армянской критики. Он был активным участником литературных процессов - выступал с докладами, статьями, аналитическими публикациями. Выгодно отличаются его критические статьи: «Литература будущего» и «Наш стих». Мы считаем, что мысли и идеи, высказанные Рубеном Зардаряном, созданные образы и критические материалы могут заинтересовать не только литературоведов, но и широкие круги людей, занимающихся литературой.

ANDRANIK K. SARIBEKYAN

“ROUBEN ZARDARYAN-THE PROSE-WRITER, THE POET AND THE CRITIC”

Philology PHD Thesis, Specialty ZH.01.01. "Armenian Classical Literature"

Defense Date: , 2012. December 19, 14:30 pm at the session of the VAK Specialized Council (High Attestation Commission) 012 under the Yerevan State University. Address: Yerevan, 52/A Abovyan street. YSU, Faculty o Philology, Room No. 202.

RESUME

In spite of his great role in cultural life of 19th and 20th centuries one of the victims of Armenian Genocide of 1915, Western-Armenian writer, critic, public speaker, politician, translator and pedagogue Rouben Zardaryan is not known to everyone. Nearly for twenty-five years- 1891-1915- Zardaryan devoted to the problems of the Armenians, by using his skills and abilities he also made investments in the pedagogical, literary and fiction mind.

Being a prominent representative of the political party known as “Armenian Revolutionary Federation- Dashnaksutyun” Zardaryan was guided by its principles and was first of all acting as an honest intellectual. The evidence of this is the fact that he was time by time editing newspapers “Razmik”, “Azatamart” of the above mentioned political party, was cooperating and keeping warm relations with his colleague-writers and public figures irrespective of their political views and party belonging. As an editor Zardaryan gave all more or less talented people an opportunity to express themselves: he was encouraging them friendly, gave good advices to the beginners.

Zardaryan is fertile in publications: in newspapers “Razmik”, “Azatamart”, “Jamanak” and many others he has so many printed articles on socio-economic, political issues, that they can become another topic for research. In these publications, especially in editorials, part of which are not signed for security reasons, he expressed judgments denying regressive phenomena of his time and boldly criticized persecutions, violence and unlawfulness held by the Turkish government. They are noticeable for the perception of problems, correct statements and comments, impressive and comprehensive analysis.

As a pedagogue Zardaryan made a big step including works by Turkish writers in volumes of his workbook “Meghraget” which was created for the purpose of expressing dialogue, solidarity and humanism.

Zardaryan is a talented translator: Maksim Gorky's “The Mother”, “Friend”, Emil Verharn's “Protest”, Edgar Poe's “Raven”, Victor Hugo's “Pity”, Alfons de Lamartin's “Where is The Justice?” and many other writings are impressive translations done with the powerful art.

As a writer and critic, Zardaryan is distinguished by his wide activity. Zardaryan's peak of literary activity is his prose. In Armenian literature he acquired his

firm place by fairy-tales of new quality and by prosaic poems. Novels and stories with their freshness of style and theme were also new word in literature.

Silence and inner conflict are the main features with which Zardaryan creates his personages by the help of whom he pictures in his novels and stories a whole row of dramatic emotional characters. Psychological emphasized personages in Zardaryan's works are heroines (Nounik, Sara, Mariam).

Writings on political topics have great place in Zardaryan's prose . In prosaic poems and legends the writer mainly expressed ideas of freedom of the Armenians, especially of the Western Armenians. He points out ways of their realization often using allegory and symbolic pictures ("Lion of The Church", "Withdrawal", "The Bulldog"). The writer is not restricted merely by national problems, he also arouses the problem of person's freedom discovering reasons of wretchedness and poverty of the people. According to Zardaryan's philosophy there is not a real freedom without brave and freedom-loving person and nation.

Zardaryan has a great contribution in the history of Armenian fairy-tale writing. He masterly created sagas, as well as, new fairy-tales. Fairy tales "Daughter- in- Law of the Sea", "The Petrouses" are peculiar literary pages, with the publishing of which in 1895 Zardaryan became famous in literary world. Like many artists, Zardaryan was also interested in the problem of life and death. That global topic was artistically reflected in writer's fairy-tales "The Man was not Dieing", "Seven Singers". Being fairy-tale writer is the main virtue of prose-writer Zardaryan.

From the point of view of art, Zardaryan's poems are comparably weak in spite of their specific image system and stylistic peculiarities. Zardaryan's poems considerably concede writing of the greatest poets of his generation Siamanto, Danie Varoujan, Rouben Sevak. Nevertheless, they are a part of Zardaryan's literary heritage, in which he expressed freedom-loving aspirations, aesthetic feelings towards nature of suffering motherland, feelings of love and other moods.

Zardaryan has a serious contribution in the development of history of Armenian critic mind. He actively took part in literary processes and came out with articles, reports and analytical publications. In this sense criticizing articles "Literature of Tomorrow", "Our poem", his wise speeches at Constantinople literary conferences on Siamanto's creative thinking and Daniel Varoujan's realism, as well as theoretical, literary-critical work "Literature" and Review "Abou Lala-Mahari" must be mentioned. Being the first reviewer of Avetiq Isahakyan's poem "Abou Lala-Mahari", he deeply perceived and explained emotions and mood of the literary hero.

As a critic Zardaryan in spite of strict and sharp evaluations mainly kept impartiality which he expressed in some cases. Nevertheless he precisely defined literary actions of that period from the perspective of further development. That is why many of his observations and definitions are also modern.

We assume, that Rouben Zardaryan expressed thoughts and ideas, created characters, wrote critical works and publications which will interest not only literary-critics but also wide range of those who deal with literature.